
ԿԱՆԽԱՎԱՐԿԱԾՆԵՐԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ, ԴՐԱՆՑ ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ, ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԸ

Գոհար Ադոնց

ՀՀ քննչական կոմիտեի տարածքային քննչական
վարչությունների գործունեության վերահսկողության
գլխավոր վարչության ՀԿԳ քննիչ, Ռուս-Հայկական (Սլավոնական)
համալսարանի քրեական իրավունքի և քրեական դատավարության
իրավունքի ամբիոնի հայցորդ, ՀՀ Եվրոպական համալսարան,
միջազգային հարաբերությունների և իրավագիտության
ֆակուլտետ, դասախոս
DOI:10.63925/18294847-2025.op20-01

Անուրացիա: Կանխավարկածները մարդուն տալիս են մեզ շրջապատող
իրականության մեջ գոյություն ունեցող առարկաների հետ մարդկային կապերի,
մարդու և առարկաների միջև հարաբերակցության բացահայտման հնարավորություն:
Կանխավարկածները մարդկությանն ուղեկցել են պատմության ողջ ընթացքում, և
դրանց ակունքները կարելի է տեսնել սովորույթներում և ավանդույթներում: Մարդու
գիտակցության մեջ որոշ առարկաներ անխուսափելիորեն համահարաբերակցվում են
մյուսների, երբեմն նաև՝ տարասեռ առարկաների հետ, որոնց միջև ձևավորվում է
որոշակի կապ, և որը կրում է կա՛մ պատճառահետևանքային, կա՛մ համադրական
բնույթ: Կանխավարկածների հասկացության մասին խոսելիս նախ պետք է հասկանալ,
թե ինչ է իրենից ներկայացնում «կանխավարկած» եզրույթը:

Մի շարք գիտնականներ անդրադարձել են կանխավարկածի հասկացության
սահմանմանը. թեև դրա միանշանակ սահմանումն այդպես էլ մինչ օրս
իրավաբանական գիտության մեջ առկա չէ: Այդ սահմանումներն զգալիորեն
տարբերվում են միմյանցից, սակայն ունեն նաև որոշակի ընդհանուր հատկանիշներ:
Գրեթե բոլոր հեղինակների տված սահմանումներում կարմիր գծով անցնում է այն
միտքը, որ կանխավարկածը էմպիրիկ փորձի վրա հիմնված եզրահանգում կամ

դատողություն է, որը ճանաչվում է հավաստի և ճշմարիտ, քանի դեռ այն չի հերքվել: Այսպիսով՝ ցանկացած կանխավարկած փորձի արդյունքների ընդհանրացում է, որի միջոցով արտահայտվում են փաստերի միջև՝ որոշակի ժամանակահատվածում դրսևորված կայուն, հաճախ կրկնվող կապերը: Միաժամանակ, քանի որ կանխավարկածն անհերքելի փաստ չէ, ապա տրամաբանական է, որ կանխավարկածի դեպքում հաճախ նկատվող վերոգրյալ կայուն կապերից կարող են լինել շեղումներ:

Վերոգրյալ դիրքորոշումների ընդհանրացման հիման վրա հոդվածում ներկայացվել է կանխավարկածի հնարավոր սահմանումը: Այն է՝

Կանխավարկածը մեծ հավանականություն ունեցող փաստերի կամ իրադարձությունների մասին ենթադրություն է, որը երկարատև կայուն էմպիրիկ փորձի արդյունքում համաընդհանուր ճանաչվում է ճշմարտացի և չի առաջացնում հակառակի մասին ողջամիտ ենթադրություն, ինչպես նաև փաստեր կամ իրադարձություններ, որոնք համարվում են ճշմարտացի՝ հակառակի մասին վկայող ապացույցների բացակայության պատճառով:

Բանալի բառեր՝ կանխավարկած, կանխավարկածի հասկացություն, նախապատվություն, սահմանում:

Կանխավարկածները մարդուն տալիս են մեզ շրջապատող իրականության մեջ գոյություն ունեցող առարկաների հետ մարդկային կապերի, մարդու և առարկաների միջև հարաբերակցության բացահայտման հնարավորություն: Կանխավարկածները մարդկությանն ուղեկցել են պատմության ողջ ընթացքում, և դրանց ակունքները կարելի է տեսնել սովորույթներում և ավանդույթներում: Մարդու գիտակցության մեջ որոշ առարկաներ անխուսափելիորեն համահարաբերակցվում են մյուսների, երբեմն նաև՝ տարասեռ առարկաների հետ, որոնց միջև ձևավորվում է որոշակի կապ, և որը կրում է կա՝մ պատճառահետևանքային, կա՝մ համադրական բնույթ¹:

Այս ամենով պայմանավորված՝ մարդկային գիտակցության մեջ առաջանում են իրեն շրջապատող առարկաների և երևույթների վերաբերյալ իր պատկերացումները, գաղափարներն ու համոզմունքները, որոնք մարդն արտահայտում է կանխավարկածների օգնությամբ:

¹ Տե՛ս Գ.Վիրաբյան, «Կանխավարկածը որպես Փիլիսոփայական-Իմացաբանական Միջոց». Պետություն և իրավունք N1 (89) 2021, հասանելի՝ <https://doi.org/10.46991/S&L/2020.89.052> (ve85in ajcelwu2jwun 01.10.2025)

Մտածողության և ճանաչողական գործընթացում, այդ թվում նաև գաղափարական մտածողություն ձևավորելիս, կանխավարկածի կարևոր դերը պայմանավորված է նրանով, որ մարդկանց կյանքում առարկաների և երևույթների ճանաչումը տեղի է ունենում կանխատեսվող գիտելիքին առնչվող իմացաբանական և արժեքաբանական դրույթների ազդեցության ներքո: Ավելին, ելնելով այն գաղափարից, որ կանխավարկածի հիմքն առարկաների և երևույթների որոշակի օրինաչափությունների վերաբերյալ մեր պատկերացումները, համոզմունքներն ու գաղափարներն են, ապա ստացվում է, որ տարբեր իրավիճակներում որևէ օրինաչափություն տեսնելու, այդ թվում նաև դրա գործունեությունն ապահովելու համար անհրաժեշտ է միջոց, որպիսին կանխավարկածն է, որն իր հիմքում արդեն իսկ կրում է այդ օրինաչափությունը, այդ օրինաչափության վերաբերյալ մարդկային մտածողության մեջ ձևավորված արժանահավատ գիտելիքը:

Կանխավարկածների հասկացության մասին խոսելիս նախ պետք է հասկանալ, թե ինչ է իրենից ներկայացնում «կանխավարկած» եզրույթը:

Ստուգաբանորեն կանխավարկած եզրույթը մի քանի իմաստ ունի՝

- 1) վաղաժամ օգտագործում, նախնական օգտագործում.²
- 2) ենթադրություն, ակնկալիք, հույս, ձգտում.³
- 3) առարկությունների կանխատեսում, դրանց նախօրոք հերքում.⁴
- 4) նախապաշարմունք. ⁵
- 5) հաստատականություն. ⁶

Իրավաբանական մեծ բառարանում «կանխավարկած» եզրույթը բացատրվում է, որպես հավաստի ենթադրություն, քանի դեռ հակառակն ապացուցված չէ»:⁷

Լատիներեն-ռուսերեն մեկ այլ բառարանում «կանխավարկած»-ը բացատրվում է որպես մտադրություն, նախազգուշացում, նախապաշարմունք, երազկոտություն,

² St'u Толковый словарь русского языка. Т. III. - М.: Гос. изд-во иностр. и нац. словарей, 1939. - էջ 735;

³ St'u Кондаков, Н. И. Логический словарь / Н. И. Кондаков. - М.: Наука, 1971.- էջ 414.

⁴ St'u Ожегов, С. И. Словарь русского языка / С. И. Ожегов. - М.: Изд-во «Советская энциклопедия», 1972. - էջ 535.

⁵ St'u Латинско-русский лексикон. - М.: Изд-во иностр. словарей, 1960. - էջ 370.

⁶ St'u Энциклопедический словарь. Изд-ли Ф. А. Брокгауз

⁷ St'u Большой юридический словарь / Под ред. А.Я. Сухарева, В.Д. Зорькина, В.Е. Крутских. М.: ИНФРА-М, 1999. էջ 535.

ակնածանք, չափից ավելի վստահություն, ամբարտավանություն:⁸ Ներկայումս այս եզրույթն ավելի հաճախ օգտագործվում է «ենթադրություն» իմաստով:

Այսպիսով՝ Ֆ.Ա. Բրոքհաուսի և Ի.Ա. Եֆրոնի բառարանում «կանխավարկած»-ը մեկնաբանվում է որպես «դրույթներ, որոնք հաստատում են փաստերի կամ իրադարձությունների առկայությունը՝ առանց դրանց գոյության լիարժեք ապացույցների: Դրանք անհրաժեշտ են այնտեղ, որտեղ հնարավոր չէ հասնել երևույթների ամբողջական ապացուցման, և ստիպված ենք լինում բավարարվել միայն հավանական եզրակացություններով»:⁹

1939 թվականին հրատարակված «Ռուսաց լեզվի բացատրական բառարան»-ի հեղինակները «կանխավարկած» եզրույթը ևս սահմանում էին որպես հավանական նախադրյալների վրա հիմնված ենթադրություն:

Մի շարք գիտնականներ անդրադարձել են «կանխավարկած» հասկացության սահմանմանը, թեև դրա միանշանակ սահմանումն այդպես էլ մինչ օրս իրավաբանական գիտության մեջ առկա չէ: Այսպես, դեռևս հոռմեական իրավունքից հայտնի «կանխավարկած» եզրույթը կիրառվել է տարբեր առումներով: Մասնավորապես Ֆ.Մ. Դիդինսկին, վերլուծելով հոռմեական իրավունքի աղբյուրները, արձանագրել է, որ «կանխավարկած» ասելով հասկանում ենք «յուրացում», «նախապատվություն»¹⁰: Մեկ այլ հեղինակ Վ.Կ. Բաբանը կանխավարկածը սահմանում է որպես իրավական նորմերում ամրագրված իրավական փաստերի առկայության կամ բացակայության վերաբերյալ ենթադրություններ¹¹, Ա.Կ. Սերգունը կարծում է, որ ապացուցողական կանխավարկածն օրենքով սահմանված ենթադրություն է առ այն, որ որոշակի փաստ գոյություն ունի, եթե ապացուցված են դրան առնչվող որոշ այլ փաստեր¹², Յու.Կ. Օսիպովը տալիս է կանխավարկածի մեկ այլ սահմանում. «յուրաքանչյուր ենթադրություն որոշակի եզրակացություն է, որն արվում է որոշակի փաստերի գոյության մասին որոշ արդեն իսկ հայտնի փաստերի հիման վրա»:¹³ Մեկ

⁸ **Տե՛ս** Латинско-русский лексикон. - М.: Изд-во иностр. словарей, 1960. - էջ 370.

⁹ **Տե՛ս** Энциклопедический словарь. Изд-ли Ф. А. Брокгауз, И. А. Ефрон. - Т. XXV. - СПб.: Типолитограф. И. А. Ефрона, 1898. - էջ 52.

¹⁰ **Տե՛ս** Дыдынский Ф.М., Латинско-русский словарь к источникам римского права. Изд. тип. К. Ковалевского, Варшава, 1896, էջ 354, Дворецкий И.Х., Корольков Д.Н., Латинско-русский словарь. М.: Изд. Госиздат, 1949, էջ 697:

¹¹ **Տե՛ս** Бабаев В.К. Презумпции в советском праве. Горький, 1974. էջ 14.

¹² **Տե՛ս** Гражданский процесс / Под ред. М.С. Шакарян. М., 1993. էջ 187.

¹³ **Տե՛ս** Гражданский процесс / Отв. ред. проф. Ю.К. Осипов. М., 1996. էջ 173.

այլ հեղինակ Յա.Լ. Շտուտինը պնդում է, որ կանխավարկածը «տրամաբանական հնարք է, որը թույլ է տալիս դատարանին օրենքով նախատեսված դեպքերում, կամ երբ դա բնական ձևով բխում է օրենքի իմաստից, փնտրվող փաստի գոյությունը կամ բացակայությունը ճանաչել իրական՝ առանց դա մատնանշող կողմից ապացույց պահանջելու, ինչպես նաև այն դնել դատական ակտի հիմքում, եթե այդ իրավական փաստը, սոցիալական պրակտիկայի վրա հիմնված ենթադրությամբ, հանդիսանում է ապացուցողական փաստի (փաստերի) ուղղակի հետևանք կամ պատճառ և միաժամանակ չի հերքվել դատավարության ընթացքում»:¹⁴

Մեկ այլ հայ հեղինակ Գ.Վիրաբյանն իր հեղինակած հոդվածում արձանագրել է, որ գոյաբանական առումով կանխավարկածը ձևավորվում է շրջապատող աշխարհի երևույթների, փաստերի, գործընթացների, իրադարձությունների, գործողությունների, վերջիններիս ու նրանց միջև առկա օրինաչափությունների նկատմամբ սուբյեկտի համոզմունքների, հավատքի, պատկերացումների, գաղափարների հիման վրա և պայմանավորված է այդ առարկաները, վերջիններիս ու նրանց միջև առկա օրինաչափությունները տեսնելու անհրաժեշտությամբ, ինչը թույլ է տալիս պնդելու, որ արդեն ճանաչողական գործունեության մեջ կանխավարկածը կատարում է իմացաբանական դեր:¹⁵

Մի կողմից՝ ճանաչողական գործընթացը կարծես չի պահանջում վերջնական անհերքելի ճշմարտության սահմանում, սակայն մյուս կողմից էլ՝ վերջինիս համար անհրաժեշտ են որոշակի ելակետային դրույթներ, որոնք ձևավորում են, կամ որոնց միջոցով մենք արտահայտում ենք շրջապատող աշխարհի առարկաների նկատմամբ վերաբերմունքը: Վերջիններիս վերաբերյալ այդ կերպ վերաբերմունքն իմացաբանական առումով արտահայտվում է կանխավարկածների՝ անհրաժեշտ ճշմարտության «փոխարինիչների» կամ որ նույնն է՝ կանխադրույթների միջոցով:¹⁶ Կանխավարկածը նկարագրում է ինչ-որ

¹⁴ Տե՛ս Штутин Я.Л. Предмет доказывания в гражданском процессе. М., 1963. էջ 86.

¹⁵ Տե՛ս Գ.Վիրաբյան, «Կանխավարկածը Որպես Փիլիսոփայական-Իմացաբանական Միջոց». Պետություն և իրավունք N1 (89) 2021, հասանելի՝ <https://doi.org/10.46991/S&L/2020.89.052>

¹⁶ Տե՛ս Гусева С.В., Место и роль презумпций в структуре юридического знания: философский анализ: дисс. канд. филос. наук. Саратов, 2009, էջ 58:

իրականություն, որը կրում է պայմանական բնույթ և կիրառվում է որպես ճշմարտություն, քանի դեռ հակառակը չի ապացուցվում:¹⁷

Կանխավարկածները հետազոտության առարկա են ոչ միայն իրավագիտության, այլև փիլիսոփայության, հոգեբանության, տրամաբանության և մի շարք այլ գիտությունների համար, որի պատճառով էլ մինչ օրս առկա չէ միասնական սահմանում. կարծիքները տարբեր են կանխավարկածների բովանդակության, բնույթի, տեսակների և դրանց դասակարգման հարցերի վերաբերյալ: Այնուամենայնիվ, «կանխավարկած» եզրույթը, դրա տարբեր գիտության ճյուղերում (սոցիոլոգիայի, փիլիսոփայության, քաղաքագիտության, պատմության, իրավունքի և այլն) կիրառմանը զուգահեռ, ուսումնասիրվում և գործածվում է հիմնականում որպես իրավական կատեգորիա:

Փիլիսոփայական տեսանկյունից դիտարկելիս կարելի է եզրակացնել, որ կանխավարկածները ոչ միայն մասնավոր իրավական գործիքներ են, այլ նաև դրանց միջոցով կարելի է հասկանալ որոշակի հասարակության շերտերի իրավագիտակցության առանձնահատկությունները: Ընդ որում՝ կանխավարկածը հստակ արտացոլում է հասարակությունում առկա այս կամ այն տիպի աշխարհայացքը, շրջապատում առկա երևույթների և առարկաների նկատմամբ վերաբերմունքը և, ընդհանրապես, հասարակությունում գերակշռող գաղափարական մոտեցումները:

Կանխավարկածների առանձնահատկությունն այն է, որ վերջիններս ունեն բարձր հավանականության հատկանիշ: Կանխավարկածի առկայության դեպքում պարտադիր է հիմնական փաստի հայտնաբերման և ենթադրվող փաստի ձևավորման միջև պատճառահետևանքային կապը, այսինքն՝ պարտադիր է, որպեսզի ենթադրվող փաստի, այլ կերպ ասած՝ կանխավարկած հանդիսացող փաստի առաջացման պատճառ դառնա հիմնական, արդեն իսկ հաստատված փաստը: Վերոգրյալի կապակցությամբ՝ ակնհայտ է, որ ենթադրվող, որևէ ապացույցով չհաստատված փաստը դեռևս անհայտ փաստն է, որն էլ, ըստ էության, հիմնական փաստի գոյությունից բխող նոր փաստն է: Արդեն իսկ գոյություն ունեցող հիմնական փաստը

¹⁷ Տե՛ս Գ.Վիրաբյան, «Կանխավարկածը Որպես Փիլիսոփայական-Իմացաբանական Միջոց». Պետություն և իրավունք N1 (89) 2021, հասանելի՝ <https://doi.org/10.46991/S&L/2020.89.052>:

կամ փաստերը կարող են հաստատվել ապացույցներով կամ այլ կանխավարկածներով: Կարևոր առանձնահատկությունն այն է, որ հիմնական փաստը կամ փաստերը, որոնցից դուրս են բերվում այլ փաստեր, արդեն իսկ հաստատված են ճանաչողական գործընթացի միջոցով: Դեռևս չհաստատված կանխավարկած հանդիսացող փաստի մասին որոշակի եզրակացությունը ենթադրվում է կամ բխում է արդեն իսկ տարբեր գործընթացների արդյունքում հաստատված կամ բացահայտված փաստից, և դրա մասին եզրակացության հանգելու համար ապացույց չի պահանջվում:

«Կանխավարկած» եզրույթը «ենթադրություն» իմաստով լայնորեն կիրառվում է ինչպես գիտության մեջ, այնպես էլ մարդկանց ամենօրյա գործունեության մեջ: Հարկ է նշել, որ թեև կանխավարկածը հաճախ հավասարեցվում է «ենթադրություն» եզրույթին, սակայն բոլոր ենթադրությունները կանխավարկածներ չեն: Որոշ փաստերի հիման վրա կարելի է ենթադրել, որ ինչ-որ իրադարձություն կամ երևույթ տեղի կունենա. օրինակ՝ արևի ժամանակ անձրև եկավ, ուստի երկնքում ծիածան կհայտնվի, սակայն ծիածանի առաջացման մասին ենթադրությունը կանխավարկած չէ: Այլ կերպ ասած՝ ոչ բոլոր դեպքերում է հնարավոր հավասարության նշան դնել ենթադրության և կանխավարկածի միջև:

Կանխավարկածին բնորոշ է այն, որ երկարատև դիտարկումների արդյունքում բացահայտվում է փաստերի միջև առկա կայուն կապը, հետևաբար, որևէ փաստի առաջացում ենթադրում է նաև վերջինիս առնչվող մեկ այլ փաստի գոյություն, որ հատուկ ապացուցում չի պահանջում: Կանխավարկածը կարող է նաև ձևավորվել բացասական կերպով, այսինքն՝ եթե որևէ փաստ բացակայում է, ապա բացակայում է նաև առաջինին առնչվող մեկ այլ փաստ: Օրինակ՝ եթե անձը չի հասել քրեական պատասխանատվության սահմանված տարիքի, ապա դա ենթադրվում է, որ վերջինս չի գիտակցում իր արարքի հակաիրավականությունը:¹⁸

«Կանխավարկած» հասկացությունը, դիտարկելով տրամաբանության տեսանկյունից, պետք է նշել, որ յուրաքանչյուր կանխավարկած ունի հիպոթետիկ բնույթ, քանի որ այն հաստատված կամ բացահայտված չէ որևէ ապացույցով, այլ բխում է որևէ այլ դրույթից: Օրինակ՝ «Եթե կա Ա-ն, ապա մեծապես հավանական է, որ

¹⁸ Ст'ю Дрягин Михаил Александрович, ПРЕЗУМПЦИЯ НЕВИНОВНОСТИ В РОССИЙСКОМ УГОЛОВНОМ СУДОПРОИЗВОДСТВЕ. Диссертация на соискание ученой степени кандидата юридических наук, Иркутск, 2004, էջ

կա նաև Բ-ն»։ Հիպոթետիկությունը դրսևորվում է ոչ միայն հաստատական երևույթներում, այլ նաև բացասական դատողություններում, օրինակ՝ «Եթե չկա Ա, ապա, ամենայն հավանականությամբ, չկա նաև Բ»։ Քրեադատավարական տեսանկյունից բացասական հիպոթետիկ կանխավարկածները կարող են դրսևորվել որևէ փաստի ապացուցվածության գնահատման դեպքերում. օրինակ՝ եթե ապացույցներ հավաքելու՝ օրենքով սահմանված կարգն էականորեն խախտված է, ապա այս կերպ հաստատված հանգամանքները, ամենայն հավանականությամբ, չեն համապատասխանում իրականությանը։ Սակայն հատկանշական է, որ որևէ բնույթի կանխավարկած քրեադատավարական նորմերում ձևակերպված չի որպես ենթադրություն կամ հավանական երևույթ, այլ որպես փաստ կամ կանոն։

Կանխավարկածների մասին խոսելիս նաև անհրաժեշտ է դրանք տարբերակել հարակից հասկացություններից, ինչպիսիք են հիպոթեզը, աքսիոման և ֆրիկցիաները։

Այսպես, աքսիոման ճշմարտություն է, որն ապացուցման կարիք չունի։ Ի տարբերություն աքսիոմայի՝ կանխավարկածի հերքումը չի բացառվում։ Աքսիոմայի ճշմարտացիությունը բխում է միայն փորձից, և դրանում հավանականության աստիճանը գրեթե հավասարեցվում է զրոյի։¹⁹

ՅԱ. Լ. Շտուտինն աքսիոման ներկայացնում էր որպես ակնհայտ ճշմարտություն, որում բացակայում են բացառությունները, իսկ կանխավարկածը՝ որպես ակնհայտ ճշմարտություն, որի համար բացառություններ են անհրաժեշտ։ Միևնույն ժամանակ, նա աքսիոման անվանում էր հանրաճանաչ փաստ՝ ընդձեռվ, որ հանրաճանաչություն՝ չի նշանականում անվիճելիություն²⁰.

Հիպոթեզը փաստերը, երևույթները և դրանց պատճառները բացատրելու համար նախատեսված տրամաբանական տեխնիկա է։ Այն սկզբնական ենթադրություն է, որը հետագայում փորձերի միջոցով հաստատվում է, հերքվում կամ փոփոխվում է՝ հիմնվելով հենց այդ փորձերի արդյունքների վրա։

Հետևաբար, կանխավարկածը հիպոթեզից տարբերվում է իր իմացաբանական դերով, որի նպատակն է կանխորոշել սուբյեկտի վերաբերմունքը շրջապատող

¹⁹ **ՏԷՍ** Ойгензихт, В. А. Презумпции в советском гражданском праве / В. А. Ойгензихт. - Душанбе: Изд-во «Ирфон», 1976. էջ 12.

²⁰ **ՏԷՍ** Штутин Я.Л. Предмет доказывания в советском гражданском процессе: автореф. дис. ... д-ра юрид. наук. М., 1964. էջեր 87, 89.

աշխարհի առարկաների նկատմամբ: ²¹ Այսինքն՝ կանխավարկածի տարբերությունը հիպոթեզից այն է, որ կանխավարկածը ոչ թե ենթադրություն է, որը հետագայում հաստատվում, հերքվում կամ փոփխվում է, այլ որոշակի օրինաչափությունից ենթադրվող, բխող դատողություն է, որն էլ հիմնված է որոշակի օրինաչափության վրա:

Ակնհայտ է, որ եթե որևէ փաստ արդեն հաստատվել է, ապա այն արդեն իսկ կարող է դրվել որևէ որոշման հիմքում, և դրա իսկությունն այլևս ստուգման կարիք չունի, հետևաբար, նման դեպքում նաև բացակայում է կանխավարկածների անհրաժեշտությունը: Սակայն այն դեպքերում, երբ կարիք կա նոր գիտելիք ձեռք բերելու, նոր փաստեր հաստատելու, կանխավարկածները մեծ դերակատարում ունեն, քանի որ դրանց միջոցով լրացվում է այդ բացը: Հաստատուն, ստուգված գիտելիքի բացը հնարավոր է լրացնել կանխավարկածների օգնությամբ, քանի դեռ մեկ այլ հաստատուն գիտելիքով, փաստով չի հերքվել կանխավարկածը:

Յա. Լ. Շտուտինը նշել է, որ հիպոթեզը երբեմն հանդես է գալիս որպես վարկած, երբեմն՝ որպես ենթադրություն, բայց այն դատարանի կողմից երբեք չի կարող ընդունվել որպես ճշմարտություն՝ առանց դրանք հիմնավորող ապացույցների՝ ի տարբերություն իրավական կանխավարկածի, որը դատարանի կողմից կարող է ընդունվել որպես ապացույց, քանի դեռ այն չի հերքվել ողջամիտ ապացույցներով: ²²

Վ.Կ. Բաբանը կանխավարկածի և հիպոթեզի մեջ տարբերությունը տեսնում է հերքման պայմանների և պատճառների առաջացման, դրա բնույթի և հետևանքների, ինչպես նաև նորմերում արձանագրման մեջ: Նրա կարծիքով՝ հիպոթեզն առաջանում է, երբ դեռ ամեն ինչ այնչափ փորձարկված չէ, որպեսզի առաջ քաշվեն թեորիաներ, իսկ կանխավարկածները գործնականում մշտական հաստատում են գտնում: Ըստ Վ. Կ. Բաբանի՝ հիպոթեզը հիմնված է խիստ գիտական ենթադրության վրա, իսկ կանխավարկածը հաճախ հիմնված է ամենօրյա փորձի վրա, հիպոթեզը մեր գիտելիքների հետագա շարժման համար պայման է, դրա ստուգելիությունը հարաբերական է, իսկ կանխավարկածը բացարձակ է, և, միաժամանակ, հերքված հիպոթեզը դադարում է գոյություն ունենալ, իսկ կանխավարկածն ընդհանուր

²¹ Տե՛ս Գ.Վիրաբյան, «Կանխավարկածը Որպես Փիլիսոփայական-Իմացաբանական Միջոց». Պետություն և իրավունք N1 (89) 2021, հասանելի՝ <https://doi.org/10.46991/S&L/2020.89.052>:

²² Տե՛ս Штутин, Я. Л. Указ. раб. - С. 87, 89. В пер. с лат. «третьего не дано, или-или» (Современный словарь иностранных слов. - СПб.: Дуэт, 1994. - էջ 740).

առմամբ կարող է մնալ անսասան, թեև այն կարող է հերքվել կոնկրետ դեպքի շրջանակներում:²³

Մ.Ս. Ստրոգովիչը նույնիսկ կանխավարկածը, ավելի ճիշտ՝ դրա իմաստներից մեկը, նույնացնում է հիպոթեզի հետ՝ սահմանելով այն որպես փաստի հավանականության վրա հիմնված ենթադրություն:

Երբեմն կանխավարկածները բարդ է տարբերակել այսպես կոչված ֆիկցիաներից: Այնուամենայնիվ, նրանք ունեն էական տարբերություններ, և այս կատեգորիաների տարբերակումը ևս կարևոր նշանակություն ունի:

Վ.Ի. Կամինսկայան գրել է, որ կանխավարկածն ստեղծվում է բանականությամբ, իսկ ֆիկցիան՝ երևակայությամբ:²⁴ Ֆիկցիայի դեպքում ակնհայտ կեղծ դատողություններն ընկալվում են որպես ճշմարիտ, մինչդեռ կանխավարկածին բնորոշ է ճշմարտացիության բարձր հավանականության հատկանիշ, քանի որ այն դուրս է բերվում որոշակի հաստատուն օրինաչափությունից: Այս պատճառով էլ, կարծում ենք, Վ.Կ. Բաբանի կարծիքն այն մասին, թե և՛ ֆիկցիան, և՛ կանխավարկածը պայամնականորեն ընդունվում են որպես ճշմարտություն, հիմնավոր չէ:²⁵ Կանխավարկածի դեպքում ակնհայտ կեղծ, ոչ ճշմարտացի դատողությունները չեն կարող ընդունվել և օգտագործվել:

Ամերիկյան մի շարք հեղինակներ, քննարկելով կանխավարկածների էությունը, նշում են, որ նախկինում, ըստ մեծամասնության, կանխավարկածը «ոչ մի բանի ապացույց չէ», և որպես հիմնավորում՝ վկայակոչվում էին դատարանի նախկին որոշումները, մասնավորապես՝ *Scarpelli v. Washington Water Power Company-ի գործով*²⁶՝ պնդելով, որ ենթադրությունն ապացույցի հետ երբևէ չպետք է մի նժարի վրա դրվի, և երբ հակառակ կողմը ներկայացնում է *prima facie* ապացույց, կանխավարկածը կորցնում է իր ուժը և այլևս չի ծառայում իր նպատակին:²⁷

Ամերիկյան գրականության մեջ շատ կարևոր անդրադարձ է կատարվում նաև փաստի կանխավարկածին: Փաստի կանխավարկածը նկարագրվում է որպես մեկ փաստի առկայությունից մյուսի առկայությունը պարզելու գործընթաց՝ առանց որևէ

²³ Տե՛ս Бабаев, В. К. Презумпции в советском праве. - Горький. ... էջեր 21, 22.

²⁴ Տե՛ս Каминская В. И. Учение о правовых презумпциях в уголовном процессе. - М.; Л.: Изд-во АН СССР, 1948. էջ 44.

²⁵ Տե՛ս Бабаев, В. К. Презумпции в советском праве. - Горький. էջ 32.

²⁶ Տե՛ս Wash. 18, 114 Pac. 870 (1911).

²⁷ Տե՛ս Wigmore. 5 WIGMORE, EVIDENCE (2d ed. 1923) § 2491, էջ 452.

օրենքի կիրառման օգնության:²⁸ Կանխավարկածը բխում է կոնկրետ գործի փաստական հանգամանքներից՝ սովորական պատճառաբանության կամ դրանց բացատրության միջոցով, այլ ոչ թե օրենքի որևէ կանոնի ուժով:²⁹ Դա եզրակացություն է, որը, որպես կանոն, տվյալ փաստական հանգամանքներից ելնելով, կարող է անել ողջամիտ անձը:

Իրավաբանական գրականության մեջ տրված են կանխավարկածի տարբեր սահմանումներ:

Մասնավորապես.

- հանգամանքների կամ իրավիճակների բնական ընթացքից բխող եզրահանգումներ.³⁰

- մոտավոր ընդհանրացումներ, որոնք թույլ են տալիս բացառություններ՝ հիմնված որոշակի հաջորդականությամբ կրկնվող երևույթների վերաբերյալ էմպիրիկ եզրակացությունների վրա.³¹

- էմպիրիկ ճշմարտություն՝ հիմնված հավանականության հիման վրա.³²

- ենթադրություն, որը ինդուկտիվ եզրակացության տեսակ է³³.

- փիլիսոփա-տրամաբանական կատեգորիա, որը ինդուկտիվ բնույթի ընդհանրացում է, որն ընդհանրացնում է կապերը, նմանատիպ երևույթները, որոնցից էլ ենթադրություն է արվում որոշակի տիպիկ իրավիճակում ինչ-որ երևույթի կամ ինչ-որ փաստի առկայության մասին: Կանխավարկածի ճշմարտացիության մասին եզրակացությունը հիմնվում է կյանքի փորձի վրա, և դրա ձևավորման մեթոդը համարվում է թերի ինդուկցիա, որը ենթադրում է կանխավարկածային ընդհանրացումների հավանականություն.³⁴

²⁸ St'u GREENLEAF, EVIDENCE (16th Ed), §48.

²⁹ St'u Anderson v. Horlick's Malted Milk Co., 137 Wis. 569, 579, 119 N.W. 342 (1909).

³⁰ St'u Строгович, М. С. Учение о материальной истине в уголовном процессе / М. С. Строгович. -М., Л.: Изд-во АН СССР, 1947. - էջ 181.

³¹ St'u Каминская, В. И. Учение о правовых презумпциях в уголовном процессе / В. И. Каминская. - М., Л.: Изд-во АН СССР, 1948. - էջ 29.

³² St'u Левенталь, Я. Б. К вопросу о презумпциях в советском гражданском процессе / Я. Б. Левенталь // Советское государство и право. - 1949. - № 6. - էջ 55.

³³ St'u Штутин, Я. Л. Предмет доказывания в советском гражданском процессе / Я. Л. Штутин. - М.: Юрид. лит., 1963. - С. էջ 84.

³⁴ St'u Дрягин Михаил Александрович, ПРЕЗУМПЦИЯ НЕВИНОВНОСТИ В РОССИЙСКОМ УГОЛОВНОМ СУДОПРОИЗВОДСТВЕ. Диссертация на соискание ученой степени кандидата юридических наук, Иркутск, 2004, էջ 16

- ընդհանուր կանոն, որն արտացոլում է իրադարձությունների և փաստերի միջև կայուն և հաճախակի հանդիպող կապերը.³⁵

- դրույթ, որը ձևավորում է ամենատարածված, ամենահաճախ հանդիպող որևէ հարաբերություններ³⁶.

- ենթադրություն, որը հասկացվում է որպես ճշմարիտ, քանի դեռ հակառակն ապացուցված չէ: Ենթադրել՝ նշանակում է բարեխղճորեն, վստահորեն որոշ դատողություն համարել ճշմարիտ, քանի դեռ այն չի հերքվել.³⁷

- որոշակի փաստի առկայության կամ բացակայության մասին պայմանականորեն ճշմարիտ ճանաչված ենթադրություն:³⁸

Եզրակացություն:

Ինչպես երևում է, վերը նշված սահմանումներն զգալիորեն տարբերվում են միմյանցից, սակայն ունեն նաև որոշակի ընդհանուր հատկանիշներ: Գրեթե բոլոր հեղինակների տված սահմանումներում կարմիր գծով անցնում է այն միտքը, որ կանխավարկածը էմպիրիկ փորձի վրա հիմնված եզրահանգում կամ դատողություն է, որը ճանաչվում է հավաստի և ճշմարիտ, քանի դեռ այն չի հերքվել: Այսպիսով՝ ցանկացած կանխավարկած փորձի արդյունքների ընդհանրացում է, որի միջոցով արտահայտվում են փաստերի միջև որոշակի ժամանակահատվածում դրսևորված կայուն, հաճախ կրկնվող կապերը: Միաժամանակ, քանի որ կանխավարկածն անհերքելի փաստ չէ, ապա տրամաբանական է, որ կանխավարկածի դեպքում հաճախ նկատվող վերոգրյալ կայուն կապերից կարող են լինել շեղումներ:

Ըստ Մ. Ա. Դրյագինի՝ կանխավարկածի վերաբերյալ բոլոր տեսակետները ճիշտ են, եթե կանխավարկածն ընկալենք միայն որպես տրամաբանական հասկացություն, որպես ապացուցման մեթոդներից մեկը: Միևնույն ժամանակ, ըստ նրա՝ կանխավարկածը նաև ավելի լայն հասկացություն է. եզրակացություն՝ ոչ միայն

³⁵ **Տե՛ս** Теория доказательств в советском уголовном процессе. - М.: Юрид. лит., 1973. - էջ 343 ^автор параграфа И. Л. Петрухин).

³⁶ **Տե՛ս** Ожегов, С. И. Словарь русского языка / С. И. Ожегов. - М.: Изд-во «Советская энциклопедия», 1972. - էջ 535.

³⁷ Տե՛ս Касумов, Ч. С. Презумпция невиновности в советском праве/Ч. С. Касумов. - Баку: ЭЛМ, 1984. - էջ 123.

³⁸ **Տե՛ս** Смирнов, А. В. Уголовный процесс / А. В. Смирнов, К. Б. Калиновский. - СПб.: Питер, 2004. - էջ 223.

մասնավոր դրույթներից, այլ ոչ միայն էմպիրիկ, այլև տրամաբանական ու տեսական ընդհանրացումներից, համեմատությունների ու դատողությունների համադրումից:³⁹

Նրա կարծիքով՝ կանխավարկածը և ենթադրությունը նույնական հասկացություններ են, սակայն «ենթադրություն» ընդհանուր հասկացությունից առանձնանում է որոշակի տեսակ, որն էլ հենց իրավաբանական ենթադրությունն է: Այս ենթադրությանը տրվում է «կանխավարկած» պայմանական անվանումը, որը բնութագրում է միայն ենթադրության իրավական կողմը:

Անդրադառնալով Մ.Ա.Դրյագինի վերոգրյալ կարծիքին՝ կարծում ենք, որ կանխավարկածներն ու ենթադրությունները չեն տարբերվում նրանով, որ կանխավարկածներն այսպես ասած՝ իրավաբանական ենթադրություններն են: Իրավաբանական ենթադրությունները կարող են կանխավարկածների տեսակներից մեկը լինել, բայց քննարկվող եզրույթը շատ ավելի լայն է, քան միայն իրավաբանական ենթադրությունները:

Վերոգրյալ դիրքորոշումների ընդհանրացման հիման վրա ներկայացնենք կանխավարկածի մեր հնարավոր սահմանումը:

Կանխավարկածը բարձր հավանականություն ունեցող փաստերի կամ իրադարձությունների մասին ենթադրություն է, որը երկարատև կայուն էմպիրիկ փորձի արդյունքում համաընդհանուր ճանաչվում է ճշմարտացի և չի առաջացնում հակառակի մասին ողջամիտ ենթադրություն, ինչպես նաև փաստեր կամ իրադարձություններ, որոնք համարվում են ճշմարտացի՝ հակառակի մասին վկայող ապացույցների բացակայության պատճառով:

³⁹ Ст'ю Дрягин Михаил Александрович, ПРЕЗУМПЦИЯ НЕВИНОВНОСТИ В РОССИЙСКОМ УГОЛОВНОМ СУДОПРОИЗВОДСТВЕ. Диссертация на соискание ученой степени кандидата юридических наук, Иркутск, 2004, էջ.

THE CONCEPT AND SIGNIFICANCE OF PRESUMPTIONS: THEIR PHILOSOPHICAL, LEGAL AND SOCIAL NATURE

GOHAR ADONTS

Investigator of particularly important cases of the General Department
for Control over Activity of Territorial Investigative Departments
Investigative Committee of RA, Applicant of PHD in department of
criminal law and criminal procedural law in Russian-Armenian (Slavonic) University
European University of Armenia, Faculty of international relations and law, lecturer

ANOTATION: Presumptions give a person the opportunity to reveal human connections with the objects that exist in the reality around us, the relationship between a person and objects. Presumptions have accompanied our society throughout history and their origins can be seen in customs and traditions. In human consciousness, some objects are inevitably correlated with others, sometimes also with heterogeneous objects, between which a certain connection is formed, and which is either causal or comparative in nature. When talking about the concept of presumptions, it is important to understand what the term "presumption" represents.

A number of scholars have referred to the definition of the concept of presumption, although its unequivocal definition is still not available in legal science. These definitions differ significantly from each other, but they also have certain common features. In the definitions given by almost all authors, the idea that a hypothesis is a conclusion or judgment based on empirical experience, which is recognized as reliable and true until it is not refuted, is crossed by a red line. Thus, any hypothesis is a generalization of the results of the experiment, through which the stable, often repeated connections between the facts, manifested in a certain period of time, are expressed. At the same time, since the hypothesis is not an undeniable fact, it is logical that there may be deviations from the above-mentioned stable connections, which are often observed in the case of a hypothesis.

Based on the generalization of the scholars definitions, the author presents a possible definition of presumption.

Presumption is a hypothethical assumption about facts or events with high probability, which as a result of long-term stable empirical experience is universally recognized as true and does not give rise to a reasonable assumption of the opposite, as well as facts or events that are considered true due to the absence of evidence to the contrary.

Key words` presumption, definition of presumption, hypothesis, definitions:

ПОНИМАНИЕ И ЗНАЧЕНИЕ ПРЕЗУМПЦИЙ, ИХ ФИЛОСОФСКОЙ, ПРАВОВОЙ И СОЦИАЛЬНОЙ ПРИРОДЫ

ГОАР АДОНЦ

Следователь по особенно важным делам по контролю над деятельностью территориальных следственных управлений Следственного комитета РА, Соискатель кафедры уголовного права и уголовно-процессуального права Российско-Армянского (Славянского) университета Европейский университет РА, факультет международных отношений и юриспруденции, преподаватель

АННОТАЦИЯ.

Презумпции дают человеку возможность раскрыть, существующие в окружающей нас действительности связи человека с предметами, отношения между человеком и предметами. Презумпции сопровождали человечество на протяжении всей истории, и их истоки можно увидеть в обычаях и традициях. В сознании человека одни объекты неизбежно соотносятся с другими, иногда даже с разнородными объектами, между которыми образуется определенная связь, имеющая либо причинный, либо сравнительный характер. Говоря о концепции презумпции, важно понимать, что представляет собой термин „презумпция“.

Ряд ученых обращались к определению понятия презумпции, хотя однозначного ее определения в юридической науке до сих пор нет. Эти определения существенно отличаются друг от друга, но имеют и некоторые общие черты. В определениях, данных почти всеми авторами, красной линией подчеркнуто представление о том, что презумпция — это вывод или суждение, основанное на эмпирическом опыте, которое признается достоверным и истинным до тех пор, пока оно не будет опровергнуто. Таким образом, любая презумпция представляет собой обобщение результатов эксперимента, посредством которого выражаются устойчивые, часто повторяющиеся связи между фактами, проявившиеся в определенный период времени. В то же время, поскольку презумпция не является неоспоримым фактом, логично, что могут быть отклонения от упомянутых выше устойчивых связей, которые часто наблюдаются в случае презумпции.

На основе обобщения изложенных определений в статье автор представил свое возможное определение презумпции. Так.

Презумпция — это предположение о фактах или событиях, которое имеет высокую вероятность, которое в результате длительного устойчивого эмпирического опыта общепризнано истинным и не вызывает разумного предположения об обратном, а также

факты или события, которые считаются верным в связи с отсутствием доказательств обратного.

Ключевые слова: презумпция, гипотеза, определение, дефиниции презумпции

ՕԳՏԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՓՐԵԶՄՍԻԱՆ ԶԱՆԿ

1. **Գ.Վիրաթյան**, Կանխավարկածը որպես Փիլիսոփայական-Իմացաբանական Միջոց. Պետություն և իրավունք N1 (89) 2021, հասանելի՝ <https://doi.org/10.46991/S&L/2020.89.052>
2. **Б.М.Волин и Д.Н.Ушаков, сост. В.В.Виноградов и другие.** Толковый словарь русского языка. Т. III. - М.: Гос. изд-во иностр. и нац. словарей, 1939. - С. 1423
3. **Н. И. Кондаков.** Логический словарь. - М.: Наука, 1971.-С. 721
4. **С. И Ожегов,.** Словарь русского языка.- М.: Русский язык; Издание 11-е, 1975 г.-стр. 846
5. **С. И. Ожегов.** - М.: Изд-во ,Советская энциклопедия, 1972. - С. 535.
6. **А.Я. Сухарева, В.Д. Зорькина, В.Е. Крутских.** Большой юридический словарь / М.: ИНФРА-М, 1999. С. 535.
7. **Изд-ли Ф. А. Брокгауз, И. А. Ефрон.** Энциклопедический словарь. - Т. XXV. - СПб.: Типолитограф. И. А. Ефрона, 1898. - С. 492
8. **Ф.М. Дыдынский.**- Латинско-русский словарь к источникам римского права / 2-е изд., испр. и доп. — Варшава : тип. К. Ковалевского, 1896. — [2], IV, С.466
9. **И.Х., Дворецкий, Д.Н. Корольков** - Латинско-русский словарь. М.: Изд. Госиздат, 1949, С.958:
10. **В.К. Бабаев.**- Презумпции в советском праве. Горький, 1974. С. 124.
11. **М.С. Шакарян,**- Гражданский процесс . М., 1993. С. 187.
12. **Ю.К. Осипов.** Гражданский процесс / М., 1996. С. 475.
13. **Я.Л. Штутин.** Предмет доказывания в гражданском процессе. М., 1963. С. 186.
14. **С.В. Гусева.** Место и роль презумпций в структуре юридического знания: философский анализ: дисс. канд. филос. наук. Саратов, 2009, С.157
15. **В. И. Каминская,** Учение о правовых презумпциях в уголовном процессе. - М., Л.: Изд-во АН СССР, 1948. - С. 132.
16. **Я. Б. Левенталь,** К вопросу о презумпциях в советском гражданском процессе,- Советское государство и право. - 1949. - № 6. - С. 64.
17. **М.А. Дрягин,**-"Презумпция Невинности В Российском Уголовном Судопроизводстве" Диссертация на соискание ученой степени кандидата юридических наук, Иркутск, 2004, С.210
18. **И. Л. Петрухин ,**- Теория доказательств в советском уголовном процессе. - М.: Юрид. лит., 1973. С.736
19. **Ч. С. Касумов,** Презумпция невинности в советском праве/ - Баку: ЭЛМ, 1984. - С. 153.
20. **А. В. Смирнов, К. Б. Калиновский ,** Уголовный процесс / - СПб.: Питер, 2004. - С. 272.
21. **В. А. Ойгензихт,** Презумпции в советском гражданском праве, - Душанбе: Изд-во ,Ирфон, 1976. С.190
22. **Judson F. Falknor,** Notes on Presumptions, 15 Wash. L. Rev. & St. B.J. 71 (1940). Available at: <https://digitalcommons.law.uw.edu/wlr/vol15/iss2/2>
23. **J.H.Wigmore ,** EVIDENCE (2d ed. 1923) « 2491, p. 452.
24. **S.GREENLEAF,** EVIDENCE (16th Ed), «48.
25. **David Kaiser,** Presumptions of Law and of Fact, 38 Marq. L. Rev. 253 (1955). Available at: <https://scholarship.law.marquette.edu/mulr/vol38/iss4/5>